ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀՈԲԵԼՅԱՐԻ ՀԵՏ

«ԹԲԻԼԻՍԻ ԵԿԱ ՀԻՆԳ ՏԱՐՈՎ, ՍԱԿԱՅՆ ՄՆԱՑԻ ՈՂՋ ԿՅԱՆՔՈՒՄ»

Հունիսի 14-ին, լրանում է Թբիլիսիի պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Էռնեստ Առաքելովի 85-ամյակը: Նա Վրաստանի վաստակավոր արտիստ է, երկրի «Պատվո շքանշանի» ասպետ: Արվեստի քուրմը այսօր գլխավորում է Թբիլիսիի պետական համալսարանի լարային գործիքների ամբիոնը: Էռնեստ Առաքելովը Երեւանի կոնսերվատորիայի պատվավոր պրոֆեսոր է նաեւ:

- Սովորաբար, լավ երաժիշտը ծեւավորվում է երաժշտական ընտանիքում: Նրան առանձնակի ուշադրություն է հատկացվում, որպեսզի «չփչացնի ձեռքը» կամ քիչ ծանրաբեռնեն ամենօրյա վարժանքներով: Ձեր ընտանիքո՞ւմ էլ այդպես էր:

- Ծնվել եմ Բաքվում, երբ այն ժամանակների համար ունեւոր տանտիրոջ ժառանգորդ էի: Թեեւ երաժշտության նկատմամբ միտվածությունն արտահայտվում էր միայն պատեֆոնի (ձայնապնակների նվագարան) առկայությամբ: Ասում են, որ փոքր ժամանակ լացկան էի, հանգստանում էի միայն այն ժամանակ, երբ պատեֆոնին դնում էին տան միակ «դասական սկավառակը»՝ ջութակի եւ նվագախմբի համար Մենդելսոնի համերգի ձայնագրությունը: Նվագում էր պատանի Բորիս (Բուսյա) Գոլդշտեյնը, ում հետ տարիներ անց անձամբ առնչվեցի:

- Իսկ ինչպե՞ս դարձաք արհեստավարժ ջութակահար:

- Ծնվել եմ պատերազմից չորս տարի առաջ, եւ մինչեւ ռազմաճակատ մեկնելը հորեղբայրս դաշնամուր էր գնել: Այդ օրից, հիանալով գործիքի հնչեղությամբ, փորձում էի մի մատով նվագել: Հորեղբորս աղջիկը ուշադրություն դարձրեց դրա վրա, եւ ամբողջ ընտանիքով ինձ տարան երաժշտական լսողության ստուգման 10-ամյա դպրոցում: Այնտեղ ես բոլորին զարմացրի իմ երաժշտական լսողությամբ եւ այն ժամանակի երկու պրոֆեսորներ՝ դաշնակահար Շարոեւը եւ ջութակահար Ռեյտիխը, միաժամանակ հետաքրքրվեցին ինձանով՝ ես հեշտությամբ կարողանում էի տարբերել եռահնչյունները... Ջութակահար մաեստրոն կարողացավ ինձ «նվաճել» խմբի համար: Կոնսերվատորիայում ինձ դասավանդում էր հանրահայտ ջութակահար Ալեքսանդր Ամիտոն, հետո նա մեկնեց Բելոռուսիա, թեեւ նրա ղեկավարությամբ ունեցա մի շարք մենահամերգներ:

- Հետո ի՞նչ եղավ:

- Հետո աշխատում էի Երեւանում, այն ժամանակ Անդրկովկասյան երաժշտական բուհերի միջեւ փոխհամերգների անցկացման հիանալի ավանդույթ կար: Երեւանի կոնսերվատորիայում հանդիպեցի շատ բաքվեցիների, այնտեղ էր դասավանդում նաեւ պրոֆեսոր Հրաչյա Բոգդանյանը՝ մոսկովյան դպրոցի հիանալի սան Աբրամ Յամպոլսկու աշակերտը: Հենց նրա մոտ էլ ես սկսեցի ուսանել երկրորդ կուրսից:

Ավարտելով ասպիրանտուրան՝ երկու տարի գլխավորում էի Թալինի երաժշտական նոր դպրոցը եւ, միաժամանակ, Հայաստանի ֆիլհարմոնիայի հովանու ներքո հանդես էի գալիս երաժշտական տարբեր համույթների եւ խորհրդային օտարերկրյա դիրիժորների հետ միասին:

- Իսկ ինչպե՞ս հայտնվեցիք Թբիլիսիում:

- Ինչպես հաճախ պատահում է կյանքում, այս պարագայում էլ վճռական դեր կատարեց նորին մեծություն պատահականությունը: Նախ, ես ամուսնացա թբիլիսցի աղջկա, Երեւանի կոնսերվատորիայի ուսանողուհի Մերի Շուգարովայի հետ... Ամեն ինչ շատ ավելի տարօրինակ զարգացում ունեցավ, ընկերոջս՝ թավջութակահար Ջոն Գեւորգյանի եւ համերգներին մասնակից ուսանողության հետ



երբեմն մեզ թույլ էինք տալիս բավականություն ստանալ՝ ճաշելով ռեստորանում: Հարեւան սեղանից լսեցինք անգլերենով խոսակցություն: Ես ասացի, որ դա ամերիկյան խոսելաձեւ է, ընկերս չհամաձայնեց, որոշեցինք գրազ գալ՝ տարվողը վճարում է սեղանի ծախսը: Ես համարձակվեցի մոտենալ եկվորին: Պարզվեց, որ սեղանի շուրջ նստած էր նա, ում համերգին պատրաստվում էինք գնալ այդ երեկո, դա Հայկ Յաղջյանն էր՝ Դետրոյթի նվագախմբի գլխավոր դիրիժորն էր: Երբ մաեստրոն իմացավ, որ ես ջութակահար եմ, հետաքրքրվեց. «Ջութակային ո՞ր համերգն է իմ ծրագրում»:

Չգիտեմ ինչու, ես հիշատակեցի Բրամսին, թեեւ իրականում ես ծանոթ էի նրա միայն առաջին մասին... Հաջորդ օրը ինձ շտապ կանչեց կոնսերվատորիայի ռեկտոր Ղազար Մարտիրոսի Սարյանը: Նրա առանձնասենյակում էր նաեւ իմ նախորդ օրվա ծանոթ Հայկ Յաղջյանը: Նա համառորեն ինձ առաջարկեց Բրամսի մենահամերգով հանդես գալ, քանի որ այն ժամանակ երեւանյան ջութակահարներից եւ ոչ մեկը պատրաստ չէր ելույթի...

- Եվ դուք համաձայնեցի՞ք:

- Հենց նույն օրը, երբ ես պրոֆեսոր Հրաչյա Բոգդանյանին ասացի դիրիժորի առաջարկության մասին, նա ուրախացավ. «Հիանալի է... Երկրորդ կիսամյակում դուք կսովորեք երկու մասերն էլ, եւ միայն առաջ...»: Սակայն երբ իմացավ, որ դիրիժորն ընդամենը երկու շաբաթ է հատկացրել դրա համար, մինչեւ ինքը ավարտի շրջայցը իր պատմական հայրենիքում՝ Հայաստանում, պրոֆեսորն ինձ անխելք անվանեց:

- Ժամանակին Գորկին գրում էր, որ մենք փառաբանում ենք անխելքների սխրանքը եւ, արդյունքում, ծեզ բաժին ընկավ «փառքի երգը»:

- Եթե ես ամեն օր՝ վաղ առավոտից մինչեւ ուշ երեկո անգիր սովորեի ջութակային երաժշտության բարդագույն մարգարիտը, ապա դժվար թե... Երբ լեփ-լեցուն դահլիճում համերգավարը հայտարարեց իմ ազգանունը, ինձ վրա կարծես եռացրած ջուր լցրին: Գերագույն ջանքերով կարողացա դուրս գալ բեմ, եւ Բրամսի երաժշտությունը կարծես բալասան դարձավ ինձ համար: Այդ համերգից հետո Հայաստանի իշխանություններն ինձ հատկացրեցին երկսենյականոց բնակարան:

- Իսկ հետո ի՞նչ եղավ:

- Հետո ինձ համար ծագեցին երկու ճակատագրական հնարավորություններ եւ կանգնեցի ընտրության առջեւ: Մինչ օրս, ես ինձ հարց եմ տալիս՝ ո՞ր որոշումն էր ինձ համար ավելի կարեւոր: Առաջինը կապված էր վրաց երգահանների հեղինակային համերգների հետ: Այն ժամանակ ես Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի կոնցերտմեյստերն էի: Համերգին ներկա ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ժամանակին թբիլիսյան կոնսերվատորիայի ռեկտոր Սուլխան Ցինցաձեն ինձ առաջարկեց ընդամենը հինգ տարով տեղափոխվել Թբիլիսի եւ դասավանդել նրա գերատեսչական բուհում: Տիկնոջս այդ առաջարկությունը շատ ուրախացրեց՝ երկու փոքրիկ որդիների հետ մոտ լինել հարազատ տանը: Եվ ահա, ես համաձայնեցի, եւ այդ օրվանից արդեն հեռավոր 1969 թվականից այդ «հինգ տարիները» շարունակվում են մինչեւ օրս: Երկրորդ չօգտագործած հնարավորությունը Թբիլիսի տեղափոխվելու օրերին ստացածս առաջարկությունն էր Լյուքսեմբուրգի սիմֆոնիկ նվագախմբի գլխավոր դիրիժորի կողմից՝ աշխատել այդ նվագախմբում որպես առաջին ջութակի կոնցերտմեյստեր՝ հիանալի պայմաններում: Սակայն ես խոսք էի տվել Սուլխան Ցինցաձեին եւ երկրի համար ծանրագույն 90-ական թվականների սկզբներին ես մնացի հավատարիմ իմ խոսքին՝ չվազելով հարմարությունների ետեւից:

- Չնայած արդյունքներն էլ ակնհայտ են՝ Վրաստանում ստացած Պատվավոր կոչումները, պարգեւները տպավորիչ են: Ասացեք, խնդրեմ, պահպանե՞լ եք բարեկամական հարաբերություններ բաքվեցի Ձեր գործընկերների հետ:

- Ցավոք, ում հետ բարեկամություն էի անում, արդեն մահացել է, մոտ հարաբերություններ ունեի Սեյրան Գանիեւի, իմ սերնդակից տաղանդավոր վերջին մոհիկանի հետ: Համոզված եմ՝ վաղ թե ուշ նոր սերունդը կհաստատի բարեկամություն եւ գործընկերություն:

- Ձեր զավակները եւս երաժիշտներ են:

- Ցավոք, նրանք սահմանափակվեցին միայն երաժշտական դպրոցով: Դեւիդը օտար լեզուների ինստիտուտի, ինչպես նաեւ տնտեսագիտական ֆակուլտետի շրջանավարտ է, գլխավորում է մոսկովյան լուրջ գերատեսչություններից մեկը: Սերգեյը՝ բժշկական գիտությունների դոկտոր, օնկո-գինեկոլոգ, մոսկովյան թիվ 13 խոշորագույն կլինիկայի գլխավոր բժիշկն է: Մի երկու տարի առաջ Մոսկվայի քաղաքապետ Սերգեյ Սաբյանինը նրան հանձնեց «Տարվա մենեջեր» մրցույթի մոսկովյան փուլի «Առողջապահություն» անվանակարգում հաղթողի դիպլոմը: Նրա երկու որդիներն էլ սովորում են Մոսկվայի միջազգային հարաբերությունների ինստիտուտում, դուստրս դեռ դպրոցական է:

- Մի պարզունակ հարց՝ պրոֆեսորի եւ դասախոսների վերջնական «արտադրանքում» կա՞, արդյոք, տարբերություն, թե՞ յուրաքանչյուր սանն այնպիսին է, ինչպես սահմանված է վերուստ:

- Բնականաբար, բացի առաջինից, իր հետքն է թողնում նաեւ իր գործն իմացող ուսուցիչը: Կատարողական ոճը, ձեւը, երբեմն նաեւ հնչողության տարբերակում, ակամայից ուսուցչից փոխանցվում է աշակերտին:

- Ձեր բնակարանի պատին կան երիտասարդ մարդկանց լուսանկարներ: Դրանք ձեր ուսանողնե՞րն են:

- Այո': Չնայած միայն նրանք չեն, որոնցով հպարտանում եմ, շատերը, դառնալով միջազգային մրցույթների դափնեկիրներ անգամ, վաղուց սփռվել են տարբեր երկրներում, շարունակում են ինձ հետ կապ պահպանել, կիսվում են ստեղծագործական ծրագրերով, խորհուրդ հարցնում: Անունները չեմ թվարկի, նրանք շա՜տ-շատ են:

- Ջութակից բացի, ի՞նչն է հոգեպես Ձեզ հարազատ:

- Ողջ կյանքում միշտ հետաքրքրվել եմ սպորտով, սիրում եմ սեղանի թենիսը, եղել եմ չեմպիոն ոչ միայն իմ կոնսերվատորիայի մրցակիցների շրջանում... Հետաքրքրվում եմ քաղաքականությամբ:

- Ի՞նչ կցանկանայիք մաղթել ինքներդ Ձեզ, նաեւ «Վրաստան» թերթի խմբագրությանն ու ընթերցողներին:

- Բոլորին մաղթում եմ քաջառողջություն եւ լավատեսություն: Կորոնավիրուսի համավարակն ինձ համոզեց, որ ինքնապահպանման գործում նշանակալի դեր է կատարում նաեւ հոգու ուժը:

ԱՐՏԵՄ ԿԻՐԱԿՈՋՈՎ

ՋԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑ

ԿԲԱՑՎԻ ԴԱՇԲԱՇԻ ԱՊԱԿԵ ԿԱՄՈՒՐՋԸ ԵՎ...

Հունիսի 15-ին Վրաստանի տեսարժան վայրերի եւ սուր զգացմունքների սիրահարները սպասում են Ծալկայի մունիցիպալիտետի Դաշբաշ գյուղի կողքին գտնվող Դաշբաշ կիրճում կառուցված 240 մետրանոց ապակե կամրջի բացմանը:

Ինչպես նշեցին KASS I and ընկերությունում, դա ամենախոշոր ներդրումն է երկրի էկո-զբոսաշրջության ոլորտում: Իսրայելական ընկերության կողմից իրականացված նախագծի արժեքը կազմել է 120 միլիոն լարի: Նախատեսված էր կամրջի բացումն իրականացնել 2020 թվականի աշնանը, բայց կորոնավիրուսի համավարակի պատճառով կամրջի շինարարությունը ձգձգվեց:

Այցելուները կամրջով կկարողանան հատել Դաշբաշի կիրճը: Կամրջի կենտրոնում ադամանդի տեսքով տեղադրված է ռեստորան-բարը: Կարգավորված է նաեւ կիրճ տանող 1,5 կիլոմետր երկարության արահետը, որը այցելուներին հասցնում է մինչեւ տեսարժան կասկադ-ջրվեժը:

Կամրջին զուգընթաց, Դաշբաշում կառուցվել է զբոսաշրջության կենտրոնը՝ իր շուրջ երկու տասնյակ ժամանակակից քոթեջներով: Ծրագրված է քոթեջների թիվը եռապատկել, իսկ 2023 թվականից Դաշբաշի կիրճում կգործարկվի նաեւ ժամանակակից հյուրանոցը:

Ինչպես նշեցին ընկերությունում, Դաշբաշի այդ նոր տարածք մուտքը վճարովի է: Սակագների վերաբերյալ տեղեկատվությունը կհրապարակվի կամրջի բացումից հետո, ընդ որում, մուտքի սակագները Վրաստանի քաղաքացիների եւ օտարերկրացիների համար կլինեն տարբեր:

Հիշեցնենք, որ Դաշբաշի կիրճը գտնվում է Ալգեթիի ազգային զբոսայգում, Քվեմո Քարթլիի տարածաշրջանի Ծալկայի մունիցիպալիտետի շրջկենտրոնից ոչ հեռու: Ծովի մակարդակից կիրճի բարձրությունը հասնում է 1100-1500 մետրի, կիրճի երկարությունը՝ 8 կմ է: Այն զբաղեցնում է 669 հեկտար տարածք, որտեղ կան բազում հիանալի ջրվեժներ ու քարանձավներ:

2016 թվականին Դաշբաշին շնորհվեց Վրաստանի բնության հուշարձանի կարգավիճակ, ապա այն հայտնվեց զբոսաշրջության քարտեզներում եւ ուղեցույցներում:

KASS Group ընկերության տնօրեն էկատերինե Թորդիայի խոսքով, անցյալ տարվա օգոստոսից հաճախորդներին հասանելի է եղել միայն զբոսաշրջիկների կենտրոնը եւ մուտքի արահետը:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ

ՀՅՈՒՐԱԽԱՂԵՐ

ԱԴԱՄՅԱՆՑԻՆԵՐԻ «ՌԵՎԻԶՈՐԸ» ԵՐԵՎԱՆՈՒՄ ԵՎ ՎԱՆԱՁՈՐՈՒՄ

Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնը վերադարձել է երեւանյան եւ վանաձորյան հյուրախաղերից: Պատմական հայրենիքում այս հյուրախաղերն առաջինն էին համավարակով պայմանավորված երկամյա դադարից հետո:

Վանաձորի Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնում

Հայաստանյան հանդիսատեսին ներկայացվեց Նիկոլայ Գոգոլի «Ռեւիզորը»: Ընթերցողին հիշեցնենք, որ այս ներկայացման առաջնախաղը, որի բեմադրիչը թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանն է, կայացել էր ս.թ. ապրիլի 11-ին Թբիլիսիում, Շ.Ռուսթավելու անվան պետական ակադեմիական թատրոնի բեմում:

Հունիսի 6-ին Երեանի քաղաքապետարանի աջակցությամբ, ադամյանցիները խաղացին Երեւանի Գ.Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական, իսկ 7-ին՝ Վանաձորի Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնում:

- Ուրախալի է հատկապես այն, որ մեր թատրոնի դերասանների մեծ մասը Մայր թատրոնի բեմ բարձրանում էր առաջին անգամ, քանի որ այս անգամ դերասանական մեծ կազմով էինք, որովհետեւ «Ռեւիզորում» խաղում են թատրոնի թատերախմբի գրեթե բոլոր դերասանները,- ասում է Արմեն Բայանդուրյանը:- Այս հյուրախաղերի ընթացքում մեզ հետ էին Թբիլիսիի Շ.Ռուսթավելու անվան թատրոնի գեղարվեստական ղեկավար, աշխարհահռչակ ռեժիսոր Ռոբերտ Ստուրուան եւ թատրոնի գլխավոր տնօրեն Գիա Թեւզաձեն: Նրանք մեծ բավականություն ստացան նաեւ մեր անվանի նկարիչ Մայիս Մխիթարյանի, բարերար Գրիգոր Մովսիսյանի, «Կարլ Լեւոնի» մշակութային կենտրոնի հիմնադիր Կառլեն Կարապետյանի նախաձեռնությամբ կայացած հայաստանյան մտավորականների հետ հանդիպմանը: Ստուրուան խոսեց իր ծրագրերի, մեր թատրոնի արդեն իսկ նոր շենքում սպասվող իր բեմադրության մասին:

Թբիլիսիի ադամյանական թատրոնի առաջիկա ծրագրերում ներկայացումներով հանդես գալն է Վրաստանի մի շարք քաղաքներում՝ Գորիում, Թելավիում, Ախալցիխեում եւ, իհարկե Հայաստանի մարզերում մի քանի ներկայացումներով հանդես գալն է, եւ, իհարկե, Հայաստանի մարզերում:

ԱՆՆԱ ՊԵՉԵՆԵՎՍԿԱՅԱ

Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի հասարակայնության հետ կապերի պատասխանատու

Լուսանկարը՝ Գոռ Փելեշյանի

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾՎԱԾ ՀՈԲԻ

ՔԱՂԱՔ, ՈՐԸ ՉՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂԻՆ ԱՆԳԱՄ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂ Է ԴԱՐՁՆՈՒՄ...

Հայաստանից Թբիլիսի բնակության տեղափոխված Հակոբ Հակոբյանը ու քիչ ավելի ուշ՝ Լիլիթ Փաշիկյանն ամուսնացան 2017-ին՝ ամրացնելով նորաստեղծ ընտանիքի հիմնաքարը սիրո քաղաքում՝ Թբիլիսիում: Շուտով, քաղաքի Մոսկովյան պողոտայի 18/1-ում Լիլիթն իրականացրեց կյանքի մյուս երազանքը՝ բացեց լուսանկարչական սրահ ու սկսեց զբաղվել սիրելի գործով՝ լուսանկարչությամբ: Երեւանի ծնունդ եւ մասնագիտությամբ լրագրող, Երեւանի Սլավոնական համալսարանի շրջանավարտ, 27-ամյա Լիլիթի սրահի հաճախորդներն այսօր տարբեր ազգի ներկայացուցիչներ են՝ տարբեր ճաշակ-բնավորություն-դիմագծով: Թերեւս այն, ինչի մասին կարող է երազել յուրաքանչյուր ստեղծագործող:

- Թբիլիսին ինձ համար սիրո քաղաք է, - ***ասում է Լիլիթը:*** *- բազում սերերով այն կապեց ինձ ու ապացուցեց, որ երբեւիցե չեմ սխալվել՝ Թբիլիսիի սերն ուրիշ է... Եկեք չկրկնվեմ ու չխոսեմ քաղաքի անկրկնելի հնության ու թարմության, կախված պատշգամբների, ժպտադեմ անցորդների, ծառ ու ծաղկի, քաղաքի հենց կենտրոնում խոյացող սարերի ու հոսող գետի, մի խոսքով, անկրկնելի ներկապնակի մասին, որ չստեղծագործողին անգամ ստեղծագործող է դարձնում: Իմ ու, համոզված եմ, շատերի համար, Վրաստանի յուրաքանչյուր անկյուն մի-մի ֆոտոստուդիա է, որտեղ կարող ես անվերջ նկարել ու լուսանկարել:*

Լիլիթը լուսանկարել է սկսել Երեւանում եւ այնպես, ինչպես բոլորը, ով ունի բջջային ու լավագույն դեպքում՝ լուսանկարչական սարք: Բայց հենց Թբիլիսին է իր մեջ արթնացրել արվեստագետ լուսանկարչին:

- Մի օր ամուսինս ասաց, որ աշխատանքի բերումով հարկավոր են գեղեցիկ լուսանկարներ,- ***պատմում է Լիլիթը:*** *- Սա իմ առաջին փորձն էր արհեստավարժության ճանապարհին: Լուսանկարներն արժանացան հավանության ու մեծ խթան հաղորդեցին: Հենց ամուսինս, նրա ընտանիքը մեծապես նպաստեցին, որպեսզի ես լրջորեն զբաղվեի լուսանկարչությամբ: Բացեցինք ամենադժվար օրերին, 2019-ին, երբ սկսվեց չարաբաստիկ համավարակը: Երեւի այդ է պատճառը, որ շփումը վրացի կամ տեղի հայ լուսանկարիչների հետ չստացվեց: Լսել եմ շատերի մասին, այդ թվում՝ Փարաջանովի ֆիլմերի լուսանկարիչ, անվանի Յուրի Մեչիտովի մասին: Լսել եմ նաեւ, որ Թբիլիսիում, հենց Հավլաբարում, գործել է Ազատ Մանուկյանի կոլորիտային ֆոտոսրահը եւ, որ ժամանակի մեծերի նրա դիմալուսանկարները զարդարել են մայրաքաղաքը...*

...Չի ունեցել, բայց ընտրել է հենց դիմանկարի ժանրը: Փորձել է լուսանկարչության գրեթե բոլոր ոճերը, շատերից միանգամից հրաժարվել: Ու եկել-կանգ առել դիմանկարներին: Հաճախ է մտածում, որ այս ուղղության հանդեպ սերը կրկին Թբիլիսիի շնորհն է, քանի որ այստեղ հատկապես է յուրացրել ծանոթ-անծանոթի հետ շփման անմիջականությունը: Ուստի սիրում է աշխատել մարդկանց հետ, բացահայտել բնավորություն, նկարին ասելիք տալ:

- Ֆոտոստուդիայի այցելուի հետ նախ ծանոթանում եմ,- ***խոսովանում է Լիլիթը:*** *- Հետո խորհուրդ տալիս իր բնավորությանը հատուկ գույն կրել: Շատերը սկզբում նույնիսկ զարմանում են, քանի որ երբեւիցե իրենց այդ գույնի մեջ չեն պատկերացրել: Բայց հետո հիանում են արդյունքով, իրենց լուսանկարով: Առհասարակ, շատ նուրբ ու հետաքրքիր բնագավառ է լուսանկարչությունը: Իր ստեղծումից՝ 19-րդ դարից առայսօր «ֆոտոգրաֆիան» լուսագրությունը, մարդկանց մի մասի համար պարզապես տեխնիկայի ձեռքբերում է, հայելանման պատկեր միայն: Բայցեւայնպես վստահ եմ, որ լուսանկարչությունը արհեստ չէ, արվեստ է եւ արհեստավարժ լուսանկարիչն այդ արվեստին տիրապետելու որոշակի ճանապարհ պետք է անցնի: Ու քանի որ նույն պատկերը ֆիքսում է նույն օբյեկտիվը, լուսանկարչից հատուկ ջանք է պահանջվում իր ձեռագիրը հաստատելու համար: Իրականում, եթե խորանանք, ապա յուրաքանչյուր մասնագիտության մեջ, լուսանկարչի լեզվով ասած, կարող ենք ֆիքսել այդ պահը: Օրինակ, հենց լրագրության մեջ նյութեր կան, որոնք շունչ ունեն, եւ կան գրագետ, ճիշտ դասավորված նախադասություններով, բայց մի տեսակ անկենդան նյութեր: Նույնը լուսանկարչությունն է: Ես, օրինակ հաճախ եմ ոգեշնչվել 20-րդ դարի լավագույն դիմանկարիչներից մեկի, հայկական ծագման կանադացի լուանկարիչ Յուսուֆ Քարշի աշխատանքներով: Զարմանալի է, որ նրա սեւ ու սպիտակի մեջ անսահման կյանք կա...*

Լիլիթի ստեղծագործության մեջ նույնպես սեւն է գերիշխում: Կատակով ասում է, որ դա էլ վրացիների «մեղքն է», քանի որ գունառատ Թբիլիսին այդ գույնը հատկապես է սիրում, հետեւաբար նաեւ ինքը:

- Մնաց՝ սովորել վրացերեն,- ***ասում է Լիլիթը:*** *- Չնայած իմ աշխատանքում սա պարտադիր պայման չէ, բայց պարտադիր է այստեղ ապրողիս, զարգացողիս համար:*

Հետհամավարակային օրերը ստիպել են կարեւորել շփումները եւ այս պարագայում արդեն վրացի գործընկերների հետ: Լիլիթն ասում է, որ համատեղ միջոցառումների կամ ցուցահանդեսների մասնակցելու հնարավորություն ու հրավեր դեռեւս չի ունեցել, բայց ձգտելու է լրացնել բացը, կամրջել հայկականն ու վրացականը նաեւ այս ոլորտում եւ իր չափով:

ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ

ԳՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

... ԵՐԲ ՆՈՐ ՇՈՒՆՉ ԵՆ ԱՌՆՈՒՄ ՀԻՆ ՈՒ ԲԱՐԻ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ

Ոչ վաղ անցյալում, գրողների շրջանում բարի ավանդույթ կար, նախքան իրենց հոգեզավակի լույս աշխարհ գալը, հեղինակները համախմբում էին իրենց գրչակիցներին ու գրական ընթերցումներ կազմակերպում: Հնչող գնահատականները, մեկնաբանություններն իրենց դեռ չծնված գրքի առաջին գրախոսությունն էին՝ ոգեորիչ, երբեմն էլ՝ քննադատող ու շտկող: Սա գրական արգասաբեր հանդիպում էր, ուր հաճախ ծնվում էին նոր գաղափարներ եւ ապա՝ ստեղծագործություններ: Եվ ահա, մեր օրերում, արդեն մեր մտավորականները, որոնց առանցքում թբիլիսցի ռուսագիր լրագրող, «Սպուտնիկ Գրուզիա» լրատվական գործակալության թղթակից Եկատերինա Մինասյանը, փորձեցին ավանդույթի վերականգնման առաջին քայլերը ձեռնարկել:

Գրական ընթերցումները կայացան հունիսի 4-ին Թբիլիսիի «Հայարտուն» մշակութային կենտրոնի եւ գրող Արտեմ Կիրակոզովի նախաձեռնությամբ: Ռուսերեն եւ հայերեն (թարգմանությունը՝ Սուսաննա Ավետիսյանի) ընթերցվեց Եկատերինա Մինասյանի «Օրորոցային կամ Արցախյան նուռ» պատմվածքը, որը հեղինակը պատրաստում է տպագրության: Եկատերինան երկարամյա վաստակ ու երկրում եւ նրա սահմաններից դուրս անուն վայելող ռուսագիր լրագրող է, ով թեեւ նովելներով հանդես է եկել գրական տարբեր հարթակներում, բայց որպես գրքի հեղինակ, առաջին անգամ է ներկայանալու ընթերցողի լայն շրջանակին:

- Իմ համառոտ պատմվածքները կամ նովելները հաճախ դարձել են ընկերներիս ու շրջապատի մարդկանց քննարկման, հիացմունքի առիթը: Սակայն, այդ պատմությունների շարքում ես առանձնահատուկ տեղ եմ տալիս «Արցախյան նուռ» պատումին, որը գրել եմ Արցախյան երկրորդ պատերազմից անմիջապես հետո: Այն, ինչ զգացել եմ եւ վերապրել քառասունչորսօրյա պատերազմի օրերին, որոշեցի հանձնել թղթին, քանի որ չէի կարող արտահայտվել այլ կերպ, ազատվել ցավից, հիասթափությունից եւ որոշեցի այս ամենը պատմել ընթերցողին: Պատմվածքս պատերազմում ծնված, ընդհատված... բայց այդ սիրո մեջ նոր կյանքի մասին է, ազգանվեր ու հայրենասեր մարդկանց Իրինայի, Միերի, Արայիկի, Նարինեի, բժիշկ Ամատունու եւ ուրիշների,- իր խոսքում նշեց Եկատերինա Մինասյանը:

Ներկայացնելով իրեն՝ նա պատմեց, թե ինչպես մի օր, արյան կանչով, եկավ Թբիլիսիի «Հովհաննես Թումանյանի տուն» գիտա-մշակութային կենտրոն հարցազրույցի եւ այստեղ ծանոթացավ հայոց լեզվի ու գրականության վաստակաշատ ուսուցչուհի Ռոզա Զոհրաբյանի հետ: Ու արդեն տատիկի կարգավիճակում *(թեեւ արտաքնապես 35-ից քիչ ավելի տարեկանի տեսք ունի)* Եկատերինան դարձավ Վիրահայոց թեմի «Սուրբ Եղիա Մարգարեի անվան» կիրակնօրյա դպրոցի սանը: Իր ուսուցչուհու շնորհիվ նաեւ սիրեց հայերենը, ծանոթացավ հայերեն այբուբենի, գրականության երեւելիների ու նրանց ստեղծագործությունների հետ:

«Հայարտան» ջերմ հանդիպումը նոր էջ բացեց վիրահայ գրական առօրյայում՝ բերելով նոր թափ ու լիցք: Ներկաները, այդ թվում՝ մշակութային օջախի ղեկավար Եվգենյա Մարկոսյանը, հույս հայտնեցին, որ գրական ընթերցումները շարունակական, իսկ հանդիպումները՝ հաճախակի կլինեն, որոնց լուսապսակը կդառնան ծնվող գրքերն ու ժողովածուները:

ԳՈՀԱՐ ՄԱՔՄԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԻ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՐՑՆ ԷՐ

Հունիսի 8-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունեց Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) նախագահ Կլեր Բազի-Մալորին:

Զրուցակիցները մտքեր փոխանակեցին երկկողմ գործակցության օրակարգի շուրջ, արծարծվեցին սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի եւ Վենետիկի հանձնաժողովի միջեւ համագործակցությանն առնչվող հարցեր եւս:

Երկուստեք ընդգծվել է բարեփոխումների գործընթացին քաղաքացիական հասարակության ներգրավվածության կարեւորությունը:

ՀԱՊԿ-Ի ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հունիսի 6-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունեց Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) խորհրդարանական վեհաժողովի խորհրդի նիստի մասնակիցներին՝ ՀԱՊԿ խորհրդարանական վեհաժողովի նախագահ, Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Պետական Դումայի նախագահ Վյաչեսլավ Վոլոդինի գլխավորությամբ: Հանդիպմանը մասնակցեցին նաեւ Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը եւ ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Ստանիսլավ Զասը:

Հանդիպմանը մտքեր փոխանակվեցին ՀԱՊԿ մեխանիզմների զարգացման, Հարավային Կովկասում ստեղծված իրավիճակի, ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակում Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման շուրջ:

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Հունիսի 9-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ ՀԱՊԿ-ի երկրների արտաքին գործերի նախարարների խորհրդի նիստին մասնակցելու համար Երեւանում գտնվող Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի եւ նրա գլխավորած պատվիրակության հետ:

Հանդիպմանը Նիկոլ Փաշինյանն ու Սերգեյ Լավրովը քննարկցին հայ-ռուսական ռազմավարական գործակցությանը, տարածաշրջանային կայունության եւ խաղաղության օրակարգին, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորմանը, հայ-ադրբեջանական հարաբերությունների նորմալացման գործընթացին վերաբերող հարցեր:

ԼՂ հիմնախնդրի համապարփակ կարգավորման համատեքստում, ՀՀ վարչապետն ընդգծեց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության կարեւոր դերակատարումը:

Զրուցակիցները մտքեր փոխանակեցին նաեւ գիտակրթական, մշակութային կապերի զարգացման շուրջ: Սերգեյ Լավրովը բարձր է գնահատել հայկական կողմի վերաբերմունքն ու հյուրընկալությունը վերջին շրջանում Հայաստան տեղափոխված ՌԴ քաղաքացիների նկատմամբ:

ՀԱՊԿ-Ի ԵՐԿՐՆԵՐԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հունիսի 10-ին Երեւանում Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի նախագահությամբ անցկացվեց Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) արտաքին գործերի նախարարների խորհրդի նեղ կազմով նիստը, որին հաջորդեց ընդլայնված կազմով հանդիպումը:

Նիստի ավարտին Հայաստանի ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը եւ ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Ստանիսլավ Զասը հանդես եկան հայտարարություններով:

Հիմք ընդունելով նիստի արդյունքները՝ կազմակեպության անդամ երկրների արտաքին գործերի նախարարները ստորագրեցին Արտաքին քաղաքականության, պաշտպանության եւ անվտանգության հարցերով ՀԱՊԿ անդամ-պետությունների ներկայացուցիչների 2022-2024թթ. խորհրդատվությունների ծրագիրը:

Քննարկվել են միջազգային եւ տարածաշրջանային անվտանգությանը, ՀԱՊԿ ճգնաժամային արագ արձագանքման մեխանիզմների ամրապնդմանը վերաբերող հարցեր:

ՄԵԿ ՄԻԼԻՈՆԻՑ ԱՎԵԼԻ ԲՆԱԿԻՉ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ Է

Հայաստանի առողջապահության նախարարության տեղեկատվությամբ, Հայաստանում կորոնավիրուսի դեմ ամբողջապես պատվաստվել է 1 միլիոն 8 հազար 404 մարդ:

Միայն առաջին դեղաչափով արվել է 127 հազար 40 պատվաստում: Խթանիչ դեղաչափ ստացել է 55 հազար 855 մարդ:

ԿԱՆԽԱՏԵՍՎՈՒՄ Է 3,5 ՏՈԿՈՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ

Համաշխարհային բանկը Հայաստանի համար 2022 թվականին կանխատեսում է 3.5 տոկոս տնտեսական աճ, իսկ 2023-ին՝ 4.6 տոկոս:

Համաշխարհային բանկի Գլոբալ տնտեսական հեռանկարներ (#GEP) հունիսյան զեկույցը կանխատեսում է, որ Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի տնտեսությունը 2022 թվականին կնվազի մոտ 3 տոկոսով՝ հաշվի առնելով Ուկրաինայում ընթացող պատերազմը եւ դրա հետեւանքները:

Զեկույցը կանխատեսում է, որ Հայաստանում տնտեսական աճը 2022-ին կլինի 3,5, իսկ 2023-ին՝ 4,6, իսկ 2024-ին՝ 4,9 տոկոս:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ. ԸՆԴԳԾՎԵՑ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հունիսի 3-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ Հարավային Կովկասի ու Վրաստանի ճգնաժամային հարցերով Եվրոպական միության հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլաարիի հետ:



Հանդիպմանը Հայաստանի վարչապետը կարեւորեց Հայաստան-Եվրամիություն գործընկերությունը եւ բարձր գնահատեց ԵՄ-ի ու Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի՝ տարածաշրջանային կայունությանը միտված ջանքերը: Նիկոլ Փաշինյանն ընդգծեց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության գործունեության կարեւորությունը:

Իր հերթին, Տոյվո Կլաարը նշեց, որ Եվրամիությունը կարեւորում է Հայաստանի հետ փոխգործակցության խորացումը եւ աջակցում տարածաշրջանային երկխոսությանը:

Զրուցակիցները մտքեր փոխանակեցին բրյուսելյան հանդիպումների արդյունքներով ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման ընթացքի շուրջ: Անդրադարձ կատարվեց սահմանազատման եւ սահմանային անվտանգության հանձնաժողովի աշխատանքներին, տարածաշրջանային ենթակառուցվածքների ապաշրջափակմանն առնչվող հարցերին:

ԱՆՑԿԱՑՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԿԻՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏԸ

Հունիսի 6-ին տեսակապի միջոցով Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ անցկացվեց Հայաստանի վարչապետին կից տնտեսական քաղաքականության խորհրդի անդրանիկ նիստը:

Տնտեսական քաղաքականության խորհրդի կազմում նիստին մասնակցեցին «Տնտեսական հեռանկարների կենտրոն-հիմնադրամ»-ի հոգաբարձուների խորհրդի նախագահ Արթուր Ջավադյանը, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի արդյունաբերության եւ ագրոարդյունաբերական համալիրի հարցերով կոլեգիայի անդամ Արտակ Քամալյանը, «Հայկական տնտեսագիտական միություն» հասարակական կազմակերպության նախագահ Գուրգեն Ասլանյանը, Երուսաղեմի հրեական համալսարանի պրոֆեսոր Եվգենի Կանդելը, Եվրոպայի տնտեսական հետազոտությունների կենտրոնի անդամ Զարեհ Ասատրյանը, ԱՄՆ Կորնելիի համալսարանի պրոֆեսոր Լեւոն Բարսեղյանը, ՌԴ տնտեսական դպրոցի պրոֆեսոր Ռուբեն Ենիկոլոպովը, Բարսելոնայի տնտեսագիտական դպրոցի պրոֆեսոր Վլադիմիր Ասրիյանը, Մոսկվայի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ալեքսանդր Աուզանը:

Նիստը ներածական խոսքով բացեց Նիկոլ Փաշինյանը:

Այնուհետեւ քննարկվեցին խորհրդի հետագա գործունեությանը վերաբերող հարցեր: Նիստի մասնակիցները համոզմունք հայտնեցին, որ խորհրդի շրջանակում տեղի ունեցած քննարկումները կնպաստեն տնտեսության ոլորտում առկա մարտահրավերների հաղթահարմանն ուղղված քայլերի, գաղափարների ու առաջարկությունների ձեւավորմանն ու արդյունավետ լուծումներ գտնելուն:

Նախատեսվում է խորհրդի հաջորդ նիստն անցկացնել հուլիսին, Հայաստանում:

ՀԱՅ ԳԱՇԵՆԱԿԱՇԱՐՈՒՀԻՆ՝ ԻՏԱԼԻԱՅԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ

Երիտասարդ դաշնակահարուհի Լաուրա Գալստյանն Իտալիայի Ջոյա դել Կոլե քաղաքում կայացած Պիետրո Արջենտոյի անվան երաժիշտ-կատարողների 24-րդ միջազգային մրցույթում արժանացել է առաջին մրցանակի եւ հատուկ կրթաթոշակի:

Ամենամյա մրցույթը հիմնադրվել է 1998 թվականին եւ կրում է իտալացի հանրահայտ դիրիժոր Պիետրո Արջենտոյի անունը: Մրցույթը Ալինկ-Արգերիխ հիմնադրամի անդամ է: Այս տարի այն անցկացվել է տարբեր կատեգորիաներով՝ դաշնակահարներ, վոկալ եւ կամերային երաժշտություն, որին մասնակցել են ավելի քան 30 երաժիշտ-կատարողներ աշխարհի տարբեր երկրներից:

Այժմ 18-ամյա Լաուրա Գալստյանը սովորում է Մանհայմի (Գերմանիա) բարձրագույն երաժշտական դպրոցում, Վոլֆրամ Շմիթ Լեոնարդիի դասարանում, ինչպես նաեւ դասեր է առնում անվանի դաշնակահար Հայկ Մելիքյանից:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՀՈՒՆԻՍ

12.06.2022 Եղիա մարգարեի հիշատակության օր

13.06.2022 Հռիփսիմյանց կույսերի հիշատակության օր

14.06.2022 Սուրբ Գայանյանց կույսերի հիշատակության օր

16.06.2022 Սուրբ Հովհաննես Կարապետի եւ Աքանագիմե եպիսկոպոսի հիշատակության օր

18.06.2022 Սուրբ Գրիգոր Լուսավորչի ելքը Վիրապից

301 թվականին Սուրբ Գրիգոր Լուսավորչի Խոր Վիրապից դուրս գալու հիշատակության օրն է, որն սկիզբ դարձավ Հայոց մեծ դարձի: Սուրբ Գրիգոր Լուսավորչի ելքը Խոր Վիրապից Հայ եկեղեցու մեծ տոներից է, որ հիշատակվում է Հռիփսիմյան եւ Գայանյան տոներին հաջորդող շաբաթ օրը: Տոնական այդ օրը բոլոր եկեղեցիներում մատուցվում է Սուրբ պատարագ:

ՍՊՈՐՏ

ԾԱՆՐԱՄԱՐՏ. ՄԵԿ ՈՍԿԵ, ԵՐԵՔ ԱՐԾԱԹԵ, ԵՐԿՈՒ ԲՐՈՆԶԵ ՄԵԴԱԼ՝ ՎՐԱՍՏԱՆԻ, ԵՐԿՈՒ ՈՍԿԵ, ԵՐԵՔ ԱՐԾԱԹԵ, ԵՐԿՈՒ ԲՐՈՆԶԵ ՄԵԴԱԼ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԻ ԳԱՆՁԱՆԱԿՈՒՄ

ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԵՐԿԱԿԻ, ԱՇԽԱՐՀԻ ԵՌԱԿԻ ՉԵՄՊԻՈՆ ԼԱՇԱ ՏԱԼԱԽԱՁԵՆ 6-ՐԴ ԱՆԳԱՄ ԴԱՐՁԱՎ ԵՎՐՈՊԱՅԻ ՉԵՄՊԻՈՆ

Ալբանիայի մայրաքաղաք Տիրանայում եզրագիծը հատեց Եվրոպայի ծանրամարտի հոբելյանական 1000-րդ առաջնությունը, որին մասնակցում էին 39 երկրների 324 մարզիկ-մարզուհիներ:

Ծանրամարտի Եվրոպայի առաջնությունում Վրաստանի թիմը իր ակտիվում երկու արծաթե (67կգ Շաթա Միշվելաձե) (73կգ Կախի Ասանիձե) եւ մեկ բրոնզե մեդալները (89կգ Ռեւազ Դավիթաձե), համալրեց մեկ ոսկե, մեկ արծաթե եւ մեկ բրոնզե մեդալով:

Վրաց ծանրամարտիկ, աշխարհի եւ Օլիմպիական խաղերի չեմպիոն, համաշխարհային ռեկորդակիր Լաշա Տալախաձեն (+109 կգ քաշային կարգում) վեցերորդ անգամ նվաճեց մայրցամաքի չեմպիոնի կոչումը: 109 կգ քաշային կարգում Գիորգի Չխեիձեն արժանացավ արծաթե մեդալի, իսկ կանանց մրցաշարում Անաստասիա Գոտֆրիդը 87 կգ քաշային կարգում Վրաստանի հավաքականին բերեց երկրորդ բրոնզե մեդալը:

Ինչ վերաբերում է Հայաստանի հավաքականին, ապա 96 կգ քաշային կարգում Դավիթ Հովհաննիսյանը նվաճեց Եվրոպայի չեմպիոնի կոչումը: Այդ քաշային կարգում արծաթե մեդալը նվաճեց Արա Աղանյանը: 102 կգ քաշային կարգում արծաթե մեդալ նվաճեց նաեւ Սամվել Գասպարյանը, իսկ 109 կգ քաշային կարգում Արսեն Մարտիրոսյանը երրորդն էր: +109 կգ քաշային կարգում պատվանդանի երկրորդ եւ երրորդ աստիճանները զբաղեցրին Վարազդատ Լալայանն ու Գոռ Մինասյանը:

Թիմային հաշվարկում 8 (5 ոսկե, 1 արծաթե, 2 բրոնզե) մեդալով առաջինը Բուլղարիայի թիմն էր, երկրորդը՝ 7 (2+4+1) Ուկրաինայի, երրորդը՝ 7 (2+3+2) մեդալով՝ Հայաստանի թիմը: Վրաստանի հավաքականը 7-րդն էր 6 (1+3+2) մեդալով:

ՖՈՒՏԲՈԼ. ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱ. ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ՝ C4 ԽՄԲԻ ՄԻԱՆՁՆՅԱ ԱՌԱՋԱՏԱՐ

Անցկացվեցին ֆուտբոլի Ազգերի լիգայի եվրոպական խմբերի հերթական հանդիպումները:

C4 խմբում հանդես եկող Վրաստանի հավաքականը տոնեց երրորդ անընդմեջ հաղթանակը: Սեփական հարկի տակ Ջիբրալթարի (0:4), մրցակցի դաշտում՝ Բուլղարիայի (2:5) հավաքականներին պարտության մատնելուց հետո, վրաց ֆուտբոլիստներն իրենց ուժերը չափեցին Հյուսիսային Մակեդոնիայի հավաքականի հետ եւ առավելության հասան 3:0 հաշվով: Ներկա դրությամբ, Վրաստանի հավաքականը երեք հանդիպումներից հետո, առավելագույն 9 միավորով (12:2 գնդակների հարաբերությամբ), միանձնյա գլխավորում է C4 խմբի մրցաշարային աղյուսակը:

C4 ԹԻՄԵՐ	Խ	Հ	Ո	Պ	ԽԳ	ԲԳ	Մ
Վրաստան	**3**	**3**	**0**	**0**	**12**	**2**	**9**
Հս. Մակեդոնիա	3	1	1	1	3	4	4
Բուլղարիա	3	0	2	1	4	7	2
Ջիբրալթար	3	0	1	2	1	7	1

B1 ենթախմբում հանդես եկող Հայաստանի հավաքականն իր անդրանիկ խաղում, սեփական դաշտում նվազագույն՝ 1:0 հաշվով, պարտության մատնեց Իռլանդիայի թիմին, իսկ երկրորդում՝ մրցակցի դաշտում՝ 0:2 հաշվով, զիջեց Շոտլանդիայի հավաքականին: Ներկա դրությամբ, Հայաստանի հավաքականը՝ 3 միավորով, զբաղեցնում է խմբի աղյուսակի երրորդ հորիզոնականը:

Վրաստանի հավաքականը, Ազգերի լիգայի խմբային մրցաշարի շրջանակներում, հաջորդ հանդիպումը կանցկացնի հունիսի 12-ին սեփական հարկի տակ: Վրաց ֆուտբոլիստները կհյուրընկալեն Բուլղարիայի հավաքականին:

B1 ԹԻՄԵՐ	Խ	Հ	Ո	Պ	ԽԳ	ԲԳ	Մ
Շոտլանդիա	1	1	0	0	2	0	3
Ուկրաինա	1	1	0	0	1	0	3
Հայաստան	**2**	**1**	**0**	**1**	**1**	**2**	**3**
Իռլանդիա	2	0	0	2	0	2	0

Ինչ վերաբերում է Հայաստանի հավաքականին, ապա այսօր՝ հունիսի 11-ին, Լեհաստանի Լոձ քաղաքում իրենց ուժերը կչափեն Ուկրաինայի հավաքականի հետ, իսկ հունիսի 14-ին սեփական հարկի տակ կընդունեն Շոտլանդիայի թիմին:

Թբիլիսիի Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնը, «Վրաստան» թերթի խմբագրությունը ցավակցում են Լեւոն Չիդիլյանին, սիրելի հորաքրոջ՝

Գոհար Գեղամի ՉԻԴԻԼՅԱՆԻ

մահվան կապակցությամբ եւ վշտակցում հանգուցյալի հարազատներին:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Հայ երգիծաբան գրող: 6.Շաբաթվա օր: 10.Հին Ուրարտական թագավոր: 11.Մաշտոցյան այբուբենի առաջին զինվորը: 12.Մեծ, քաղցրահամ լիճ Շոտլանդիայում ... Նես: 13.Քարթլոսի եղբայրը: 15.Այրող, խեղդող ամառային եղանակ: 16.Տղա, որձ: 18.Ոչխարի խուզված բուրդը: 20.Առողջ, կենսասեր, ժիր: 22.Գրքերի հրատարակչություն Թբիլիսիում: 25.«... է, Անուշ, ներս արի դագեն» (Հովհ.Թումանյան): 26.Սրված, ոչ բութ: 27.Սատկած կենդանու դին: 28.Ցուցական դերանուն: 30.Անֆիլտր ծխախոտ: 32.Անձնական դերանուն: 35.Ճաշի համային բաղադրիչ մաս: 36.Ասորեստանի մայրաքաղաքը: 38.Աշուղ, գուսան, բանաստեղծ Սայաթ-...: 39.Վրացական ֆիլմ: 40.Ծառաբնի փուչ մասը: 42.Թատերական ներկայացման տեսակ: 43.Հայ բանաստեղծ, Մխիթարյան միաբանության անդամ: 46.Պերճ Պռոշյանի ծննդավայրը: 48.Մուրացանի վեպի հերոս ... Ամրամ: 51.Վառ կարմիրը: 52.Վախ, սարսափ: 53.Վարպետ օդաչու: 55.Օրգանիզմի մաս: 57.Վեր կաց, բարձրացիր: 58.Հայոց այբուբենի տառ: 59.Քառասունհինգ որպեն դպրոցում: 60.Տեղացի, ոչ եկվոր: 61.Երկարության չափման միավոր: 62.Հայաստանի մայրաքաղաքներից: 63.Բերդ, որտեղ պահվում էր Արշակ թագավորը: 64.Հայ մեծ հայդուկ, ֆիդայի Աղբուր ...:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Թիֆլիսում 1883-1918թթ. լույս ընծայված պարբերական: 3.Գետ Հայաստանում: 4.Ծովափնյա քաղաք Ղրիմում: 5.Կովերի խումբը: 6.Պարսիկ նշանավոր բանաստեղծ Ֆիրդուսու հռչակավոր պոեմը: 7.Ամայի, դատարկ, բուսազուրկ տարածք: 8.Լիբանանի մայրաքաղաքը: 9.Ե'վ պարանոց, ե'ւ գլխարկ, ե'ւ պետություն: 14.Սեւանի ձկնատեսակ: 17.Մաշտոցյան այբուբենի զինվոր: 19.Միեր Մկրտչյանի դերերից՝ ... դը Բերժերակ: 21.Ուկրաինական քաղցրավենիքի ֆիրմա: 23.Հայոց աստվածուհիներից: 24.Մետրոյի կայարան Թբիլիսիում: 25.Լեռնաշղթա Եվրոպայում: 29.Բոլնիս-Խաչենում ծնված հայ բանաստեղծ, մանկավարժ, հեքիաթագիր: 31.Լենինի քաղաքը: 33.Պետություն Աֆրիկայում: 34.Վրաց բանաստեղծ, «Չորս օր Հայոսի երկրում» գրքի հեղինակը: 37.Հնդկաստանի կին վարչապետ ... Գանդի: 41.Պեպոյի ընկերը: 43.«Խաս ու ղումաշ, ... հագին» («Աղվեսն ու ագռավը» առակից): 44.Իտալական օպերայի հայտնի քաղաքը ... Սկալա:45.Հայ գուսան: 47.Իրար հետեւից շարված: 48.Առավոտյան բույսերի վրա նստած ջրի կաթիլները: 49.Լեռնային Ղարաբաղ: 50.Կուբայի ղեկավարը: 54.Սրտաբուխ զգացողություն: 56.Մարդկության հայրը: 60.Գյուղատնտեսական գործիք:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Հանդարտ: 8.Աղասի: 9.Ակր: 10.Վանգա: 13.Սուրմա: 18.Սարք: 19.Դինամիկա: 22.Աշուղ: 23.Դմիտրի: 27.Մոխիր: 29.Սագ: 30.Ճաղ: 31.Ունելի: 33.Թարմ: 36.Ղեկ: 37.Նախագահ: 41.Սարո: 42.Անասուն: 45.Ցար: 47.Կարպ: 48.Ջազ: 49.Կետ: 50.Թունել: 51.Վոլտ: 53.Սիգար: 54.Շուրա: 55.Իա: 56.Գիտակ: 57.Տնակ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Անուն: 2.Մայա: 3.Օտար: 4.Ֆարս: 5.Չադրա: 6.Միսաք: 11.Ալի: 12.Գրաշի: 14.Ուստիան: 15.Մրուր: 16.Փիղ: 17.Չադ: 20.Նախարար: 21.Մուրճ: 24.Մսուր: 25.Տգեղ: 26.Իլիկ: 28.Եղիա: 32.Լեմուր: 34.Անբասիր: 35.Մխոց: 38.Գիր: 39.Հանելուկ: 40.ՄԱԿ: 43.Սաբո: 44.Նպատակ: 46.Ամուրի: 49.Կեշա: 50.Թագ: 51.Վատ: 52.Լիա:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՀՅՈՒՍԻՍ ՄՈՆԱՄԱՐՏՈՍ: ԹԲԻԼԻՍԻ 0105, Գ.ԱԹՈՆԵԼԻՆ ՓՈՂՈՑ 5.
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ՏԵԼ. ՀԵՌ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ՎՐԱՍՏԱՆ»
ԹԲԻԼԻՍԻ, ՎՐԱՍՏԱՆ
"VRASTAN"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445